76

2000

Դ. 117

# ՎԻՊԱՐ

ՍԱՆՈՒԹԻՒՆ՝

զերկնային մարմնոց շարժմանէ, զլուսաւորացն՝ որ 'ի նմա, և զհաստատութենէ երկրի։

Զքեզ աղաչեմ ով տէր Յէ սուս.
լեր հեռանատու ինձ լըքն. լոյս.

254-ՍՀ

№ 02
ի Գրատանց
Երեւանայ Հոգեւորական
Կառավարչութեան
1875/86

ՊԵՏ. ԳԵՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
ՀՍՍՀ – Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ [illegible]

267 Հ. 117

# ՏԵՏՐԱԿ ՀԱ
# ՄԱՌՕՏ ԵՒ ԼԻ
## ԻՄԱՍՏՆԱԼԻՑ ԲԱՆԻՒՔ.

Ընտրեալ Հոգեւոր եւ իմաստուն Վարդապետին Յովհաննու Երզնկացւոյ, որ եւ ասի Ծործորեցի. ասեա զբանն լուսաւորութեան արարչագործ. եւ թեմայն Ա.Գ. է յաղագս թուոց երկնից, շարժման լուսաւորաց, կարգի աստեղաց, եղանակաց տարւոյ, եւ այլոց իրաց բնականաց. Ի խնդրոյ զօրապետութեան պարոնին Վախթանկայ կոմսի որդւոյ՝ Հռչակաւոր Իշխանին Հայոց՝ Աւագայ. յամի տն 1284. եւ ի թուականութեան Հայոց, ՉԼԳ.

Տպագրեալ ի Հայրապետութեան Լուսաւորչի Սրբոյ Աթոռոյ Սրբ Գահոյն Էջմիածնի Տն ՂՈՒԿԱՍՈՒ Սրբազան Կաթողիկոսի Ամ Հայոց.

Հրամանաւ եւ ծախիւք՝ Սր Առաջնորդին Իշխանին Ծայրագոյն Նուիրակի Ռուսաց երկրի ազգին Հայոց Սր Աթոռոյն Սրբ. Տն Յովսէփայ Սրբազան Արք Եպիսկոպոսի Սանահնեցւոյ Երկայնաբազուկ Արղութեանց.

Յամի Տեառն 1792, յունուարի 24.

Ի տպարանի նորին Բարձր Սրբազնութեանն
Ընդ Հովանեաւ Երկնաշնորհեալ Սբ Խաչ Վանիցն,
որ ի Նորն
ՆԱԽԻՋԵՒԱՆ.

3701-57

891.99-1

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԲԱՐԵՄԻՏ ԸՆԹԵՐՑՈՂՍ.

Ահաւասիկ մատուցանեմ խնամատարեանց մանկ նոցա հայկազունեաց՝ զիրկս վաստակոց՝ Աշխատասէր Տէր Վարդապետին մերոյ՝ Երանելւոյն Յովհաննէսի Երզնկացւոյ, որ եւ կոչի Ծործորեցի.

Որք՝ եթէ լինին 'ի ձեզ սիրահարութիւնք ծանօթութեանց դրութեն երկնային կամարաձեւ եւ խորանանման ձգմանն՝ ըստ դասուց, եւ շրջանացն նորին, կարէք այսու դիւրաւ լինել հասու. իբրեւ զբանալի՝ մեծագին գանձուց՝ նախ զսա ունելով 'ի ձեռս. բանալ զայն զարմանագործ եւ զհրաշակերտ գրուած՝ մտանել 'ի նա քննութիւ, եւ սքանչացեալ ընդ անձառելի գործս արարչին, բարբառել առ նա՝ ըստ յոբայ. Ո՜րպէս զմեծամեծս եւ զանքննելիս եւ զհրաշակերտս՝ որոց ոչ գոյ թիւ. Եւ ապա համարձակիլ մտանել յայլ մեծագոյն եւ գերապայծառ դիտութիւն՝ Ծագման իրողութեանց. Եւ մի եւս սիրել զծուլութիւն տգիտութեան, որպէս 'ի բնէ անտի են բարք՝ անուսումնասէր ազգիս մերոյ. յաղագս որոյ եւ եպերեալ գանիմք միշտ առաջի այլ ազգաց.

Եւ զի՝ վայելուչք են մարդոյ ուսմունք. քանզի՝ նովաւ ունիմք մեք զծանօթութիւն ճշմարտութեն, եւ

'ի

Վ'ի ձեռն նորա աստուածայինք դիւրաւանորութ միոյ. որով
կարգադրանաց միայն մեր անսութի վերանալ առ այն
չելի լոյսն, և խորախոյս բարձեալ աղաղակել թէ՝ ո՜վ
զի մեծ են գործք քո տր. և թէ՝ լի են երկինք և եր-
կիր փառօք քո. Ասաի՝ ախորժմամբ հաճեցուք զք
պարգևութիւ 'ի լոյս ընծայել զսա, և նուիրել հայկա-
զունկայց, որպէս զձեռածնայի հզմամբ՝ ուղղապէս
առաջնորդօղ ձանաչման՝ սկզբան իրաց, զկարգի, ըզ
շարկայի, զներգործութեց, և զվախճանի. Որոյ օգտա-
կար պտուղն՝ յորմէ քաղել ունիք, է մաքրութիւն
զմիզգանց և ազատում ամ գոյից՝ թշնամիք անհաշ-
տելիք և բարեկամք անզգալեկիք՝ կարդեցեալ և կա-
ցուցեալ հողեղ մարմնաւոր, զյօդումնածոյ աշխարհի,
զընթացից լուսաւորաց երկնայնոց. զերևութից օդա-
կանաց, զղանազան կենդանեաց, զբուսոց և տեսակաց
նոցին. մանաւանդ ապէս զնաւորինութեցն զանհամա-
մար գեղեցկութ, և զմոլորութեցն ամենատարատ զագ-
րութէ. որ է վախճան ամ ուսմանց. զի զիմաստասի-
րութիւն խակս մի մահու՝ որ ասայն, անուանեաց. -
Քանզի՝ քննելով իմաստից նպատակն է՝ զպանծալի ա-
ռաքինութիւն 'ի մարդն հաստատել, և զմոլութիւն ար-
մատախիլ մնդ մաշակցոյ ցանել. Համեմատ զպատուա-
կանն յանառողէն՝ ըստ մարդարէին երանելոյ անոր
գեալ զշարն սասաւթե՝ ընտրելով զբարին Ճշմարտու-
թեան՝ ըստ եսայեայ.

Ըրդ՝ մինչ այսպէս հանձնար մարդկային հարթա-
տանաց զխառութեամբ ճշմարտութեան, յայնժամ ծր
նաւի յայնմանէ ներքին բանականութի. Ասոն զի՝
ամ Ճշմարտութիւն խնքն ըստ ինքեանէ գեղեցկութի
անպատմելի. և ըստ այնց իմաստնոյն՝ է նշոյլ մշտնջե-

նա

նուէրս լուսոյն, և հայելի անարատ՝ ոյ ազդեցութեան, և պատկեր առատութեան նորա ։ Սուրբն այսուհետև անխափան պարապմամբ յընթերցումն սորա՝ և ՚ի սարին ոսկի եղելոյն, զծածկարարութիւն մարթոյ՝ և զգաստոյն հոգութիւն. մինչ ՚ի բաց լքցուք. զի յայ խմառելոյն՝ առաւելապէս փայլեսցէ ՚ի միտս մեր, և ըզ թեթևացեալքս վերացուսցէ առ ամենայն քաղցրութիւնն ոյ. զի նա է որ ձգէ ՚ի ծառայս մինչև ՚ի ծագս՝ օգտակար առաջնորդութեամբ և զուարճանէ զամենայնն քաղցրութեամբ ։

Արդ ՚ի հարցանելն մեր ՚ի յօտար ազգաց՝ թէ առ ի՞նչ ծնեալ իցեմք արդեօք յաշխարհիս, կարողանայցեմք ըստ անաքսագորեայ պատասխանել թէ՝ ծնեալ եմք առ ՚ի նկատել զարեգակն, զլուսին, զաստեղս և զերկինս ։ Իսկ յայնս ևս ոչ կալ և մնալ ոչ կարեմք և պարապանօղեալ, այլ վերացուցանել ըզ միտս մեր անդր ևս, և մտանել ՚ի ներքին կողմն վարագուրին՝ ուր դրախտն մեր քո եմուտ, և զհամարձակութիւն մեզ շնորհեաց ՚ի մուտս արքութեանց արևմտին իւրով, նորոգելով մեզ ճանապարհ նորոգ ՚ի ձեռն մարմնոյն իւրոյ՝ ըստ առաքելոյ, սքանչացեալ ընդ պատրաստեալ վայելչութիւնն՝ զիմաստութիւնն ընդ առաքինութեան՝ երբև զոսկի ընդ սարդիոն՝ աքանչելապէս հիւսողաց, և մեծամեծամբ համարձակապէս բարբառել՝ ընդ ՚ի յերրորդ յերկնի նորա յափշտակելոյն պօղոսի թէ՝ այսուհետև ոչ բարձրութիւն և ոչ խորութիւն և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ անտի ոյ, որ ՚ի քն յն ՚ի տէր մեր ։

Սան

Է.

Վասն որոյ՝ և մեր փոյթ յանձին կալեալ ջանամք ՚ի յօգուտ պատուելի ազգիդ մերոյ, և ցանկամք մեծաւ զգուշութեամբ գրեանս ազնիւ ՚ի նորահաստատ տպարանի մերում, որք ՚ի Մէջ և յԱնուանելի Վարդապետացն մերոց էին շարադրեցեալք. որք խելապէսպէս են լուսով գիտութեան, և պայծառ անարատ հաւատով. և յաղեցուցիչք անզգալապէս՝ քաղցրելոյ մտաց. Յորոց զոմանս մինչև ցայժմ տպագրութեամբ՝ յասպարէզ աշխարհի լուսաւորութեան Սուրբ Եկեղեցւոյ մերոյ՝ բարձրացուցաք, և զայլս բազում հանդերձեալ եմք հրատարակել ՚ի լոյս ածել ։ Զորս ՚ի յընթերցանութիւն. և յօգտակար ձեր ՚ի նոցանէ՝ առաջիկայ յիշման արժանի.

Զներգործեալ ոգի՝ Յովսէփ Ամարցեան Տէր Աստուածատուր՝ հոգևորաց հովուապետ Արքեպիսկոպոսի Արեւելեան. որ էր ընդ Մեծաւն՝ լուսաւորեալ Սբ Կաթողիկոսին Մեծն Սահակայ Ներսէսի, և Աշխէնի՝ Գոհարայ Թագաւորին Սեպուհի Մեծի, անձանց Զանազան ՚ի պայծառ աւագին Սեւեւնի Բագէդ էր․

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ·

Յաղագս երկնային շարժմանն նուաստ Յովհաննիսի Երզն-
կայեցւոյ շարադրեալ ժամանակաց Բանից. 'ի խնդրոյ Բարեպաշտ
և երկիւղածութեան պատուականոյն պարոն Աղբանկայ։

Ամենայն ոք՝ որ գիտէ որ է ծնունդ անմարմին լուսոյ, գրով 'ի քարտիզի կամիցի դրոշմել. պարտի և զնորին պատճառն՝ յանդիման կացուցանել։ Արդ էս զի՝ վերջին ժամանակին ծննդոց մարդկան՝ յօժարութիւն և սէր խնդրողի բանին, և աշխատանք տուողի խնդրոյն, մի ծածկեսցի 'ի բանասիրաց և յաշխատասէր անձանց։ Ոչ կարօտքն բանին՝ իբրև զերկիր ծարաւուտ՝ զցօղ քաղցրութեան երկնի խընդրեսցեն. և այս սպասաւորքն բանի՝ իբրև զամպ ընդունակ ցօղոյ՝ զառեալն յանսահման ծովէ իմաստից և 'ի գետոց հասանէ, յաղագս ծուլութեան մի արգելցեն։

Ըստ որում և ես նուաստս Յոհաննէս Եզընկայեցի՝ աշակերտ Հոգելից Հօրն և Տ՟ր Վարդապետին Վարդանայ, սպասաւոր սբ գրոց բանի, 'Ի թուին ՉԼԳ, պատահեաց գալ 'ի կողմանս մեծագահ Թագաւորութեանս աշխարհիս Վրաց, 'ի հռչակաւոր և 'ի մեծ 'ի մայրաքաղաքն 'ի Տփխիս, փայտակարան կոչեցեալ 'ի վերս պատմողաց։ Ուր հանդիպեցաւ խօսել մեզ բանս քաղցրութեան 'ի դուռն եկեղեցւոյն՝ մեծապատիւ և բարեհամբաւ և մեծ իշխան Հայոց՝ պարոն Քարիմա-

տինին․ Զոր շինեալ էր ածածաքէր և բարձ հողի ծայր Նորա պարոն Սմէկն․

Նաև էր խօսեցեալ բանն՝ յաղագս երկնայինն շարժմաննըն։ Վասն որոյ՝ ախորժելի եղև զըճարթումն պատանւոյն Վաղթանկայ․ որ էր որդի կըռօսի՝ հաշխաճօր անուճան պարոն Սմէկայ․ Նաև մայրենի ազգաթուն մեծի իշխանին Գալալայ՝ տեառն Խաչենոյ․ որդի մօր բարեպաշտի, որ էր քնի օրէնօքն զարդարեալ հոգի, և 'ի խնդիր յորդորող զորդի․

Սա խնդրեաց 'ի մէնջ յաղագս երկնի և նորին շարժմաննն․ Զոր հարկեալ յորդորեաց զտկարութիւնս մեր, և մեծազգ Եպիսկոպոսն Տէր Յոհան․ յազնուական զարմից․ և բարետոհմիկ հարց ծնունդ։ Որ և շէքժեալ 'ի սէրս և 'ի յուսոյ խնդրողաց, և ակն ունել 'ի պատուճոյ շնորհաշնուք Տն՝ և 'ի գերս պատիւ եկեղեցւոյ գլխոյն, 'ի նըրբաշաճիլ և 'ի կորովամիտ բանից նը հարցն վարդապետաց մերոց․ և յիմաստասիրաց սորանց պարզեալ գրեցի համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք․ վն դիւրաւ հասկանալի լինելոյ ընթերցողաց։

Արդ՝ որ գրէք յաղագս օգտի զսակաւ աշխատութիւնս մեր․ գրեսջիք և զայս նախագրութիւնս, և զբան յիշատակի անուճան խնդրողաց՝ և գրողի սորին․ գրեալ լիջիք և դուք 'ի գիրն կենաց։ Նաև որ ծուլանայ և թողու զսա, ոչ լինի առանց պատժոյ․ իբր յոլով աշխատութեանց՝ զիւր սակաւն զին տալ ոչ կամեցող լեալ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.



Ն և քաղաք՝ յիս ոանծալի պարագրո կան.
յոր աշտարակք՝ կենդանակերպք՝ երկոտա սան։
Որք են եօթ՛նից՝ մոլորակացըն կայա րան.
՚ի մըտանելըն՝ աղդեն կանուխ՝ ըղվաղորդ եայն։



Յաղագս երկնից թէ քանի՞ են երկինք, և որպէս ի՞ [illegible] յանգոյից եղեն հրամանաւն աստուծոյ։ Ա.

ԱՐԱՐԻՉՆ ԱՍՏՈՒԱԾ ԻՄԱՍտութեամբ և զօրութեամբ արար զաշխարհս ամ զերևելիս։ Եւ երևելի գործովն նորա՝ զի յոչընչէ արար զամ արարածս. և տեսանելի իմաստութեամբն՝ զի գեղեցիկ արուեստիւ յօրինեաց զերկինս և զերկիր։

Չորս նիւթ արար ամ 'ի պէտս շինուած աշխարհի։ Հուր՝ և հողմ. Ջուր՝ և հող։ Սոքա՝ սկզբունք և արմատք են ամ գոյից. և են հակառակ միմեանց։ Իսկ այլ արարածքս՝ ծագք և ծնունդք 'ի սոցանէ յառաջ եկեալ՝ և խառնեալ ընդ միմեանս, յորմէ ստեղծան եղականքս, բոյսք և կենդանիք։ Եւ պիտոյ էր այս չորք տարերքս. զի առանց հողոյ ոչ լինէր թանձր մարմին, և ոչ առանց ջրոյ՝ շաղղումն և միաւորութիւն, և առանց օդոյ՝ որ է հողմն, շարժումն ոչ լինէր, և ոչ առանց հրոյ՝ գոյն և երևումն։ Վասն որոյ՝ ստեղծ զամ զգալի և նիւթական եղեալքս 'ի

հողոյ

հողոյ, և դալարոցացց Օրոմն. եւ շարժումն 'ի յօդոյն, և երևումն և գոյն 'ի Հրոյն. Եւ այս է զոր ասէ մեծ մարգարէն Մովսէս. ի սկզբանէ արար ած զերկինս և զերկիր. Զի երկինքն՝ երկու իրք է, հուր՝ և օդ. Եւ երկիրս՝ երկու իրք է. հող՝ և ջուր.

Եւ յորժամ ստեղծ զայս չորս տարերքս, արուեստ իմաստութեանն այ երևեցաւ 'ի ստեղծուածն իւր. Զի հողն ծանր էր՝ զներքին վայրն էառ. և ջուրն 'ի վերայ հողոյն զետեղեցաւ, և օդն որ թեթև էր քան զջուրն, 'ի վերայ ջրոյն կացուցաւ. Եւ հուրն որ առաւել թեթև՝ էր քան զօդն, 'ի վերայ քան զնա սահմանեցաւ. վասն զի՝ յօդն զգիջութիւն ջրոյ կայ. Եւ քեզ օրինակ բանիս, թէ առնուս աման՝ և ջուր. և ձէթ, և արկանես յաման մի խառնեալ, առնու զն՝ յատակն նստի. ջուրն 'ի վերայ գայ. և ձէթն 'ի վերայ քան զջուրն, և խառնեալքն ամանն՝ զամենայն 'ի ներքոյ իւր ունի. Ըստ այսմ նմանութեան՝ և չորք տարերքս դասեցան. Հուրն՝ զի թեթև է բնութեամբ, և շարժումն 'ի վեր ունի, կնդաձև շրջապատեց զայլ երեք տարերսն. Եւ զի հողմն 'ի ներքոյ անցեալ՝ փչեց փեռեկնեց 'ի վեց կողմն. 'ի վեր և 'ի վայր և 'ի չորս կողմն երկրի, զհետ հրեղէն երկնի ձևացաւ. և հողմն՝ կարգեցաւ 'ի ծոց նորա որպէս յաման արկեալ. Եւ երկիրս՝ որ է հողն և ջուրն. 'ի մէջոցի երկնից կառուցաւ.

Եւ այս է հրեղէն երկինքն՝ զոր արար ած յառաջին աւուր արարչութեան. որ բաժանեցաւ յերկու կիսագունդ. Զի որպէս 'ի վերայ երկրի կամարաձև է և բոլոր, նոյնպէս է և 'ի ներքոյ երկրի. Քանզի հեռի է յերկրէս 'ի վեց կողմանէ. 'Ի վերայ երկրի՝ սոյ տեսանեմս զմիջոյս զայս, որ 'ի վեր է երկինքն յերկ

րէս. Նոյնպէս և այս չափաւն՝ ՚ի ներքոյ երկրի, ներքին փորուածն և ծոյն. Այսպէս ընդ արևելս և ընդ արևմուտս, և ՚ի հիւսիս և ՚ի հարաւ. հեռի է երկինք յերկրէ.

## Յաղագս երեքրորդ երկնից, եւ շրջագայութեան նորին թէ ո՞րպէս է ։ Ա

Արդ՝ առաջին երկինն՝ հրեղէնն է, որ աստացաւ. զոր եթեր անուանեն. իսկ որ ՚ի յետ նորա երկրորդ երկինք՝ հաստատութին է, զոր արար ած յերկրորդ աւուր արարչութեն. Զի ասաց ած եղիցի հաստատութիւն ՚ի մէջ ջրոցդ, և եղիցի մեկնել ՚ի մէջ ջրոյդ և ջուրց. և եղև այնպէս. Զի ջուրն զերեսս երկրի ծածկեալ ունէր. Հրամանաւն այ ՚ի մէջ ջրոյն եմուտ օդն որէ հողմն. և վերացոյց զկէս ջրոյն ՚ի վեր՝ կամարաձև որպէս խորանն, և այնպէս օդն և ջուրն որ ՚ի վերայ օդոյն, կոչեցաւ հաստատութիւն. Արդ է այս երկրորդ երկինք՝ ՚ի յօդոյ և ՚ի ջրոյ. ՚ի ներքոյ առաջին և վերին երկնից, որէ հրեղէն.

Արդ է երրորդ երկին օդեղէն, յորում են արեգակն և լուսին և աստեղքն, և երկինք կոչին զերք. Ըստ այնմ, արար զլուսաւորս և եդ զնոսա ՚ի հաստատութեանն.

Արդ այս երեք երկինքս՝ հեռի են ՚ի միմեանց. զի որպէս օդն՝ յորում լուսաւորքն հեռի են յերկրէս, նոյնպէս ջրեղէն կամարն հեռի է յօդոյն. Այսպէս և հրեղէն երկինն, հեռի է ՚ի ջրոյն.

Արդ այս երեք երկինքս անդադար շուրջ գան՝ զերկրաւն. Հրեղէն երկնից շուրջ գալն՝ անտեսանելի է աչաց. և անթուելի համարոյ, և անչափելի.

Իսկ

Իսկ այս երկինս՝ որ աչաց երևի շուրջ գալն. և լուսաւորքդ տեսանի. աստի իմացաք զվերլինն. Ապա թէ անհաւատալի թուի քեզ, թէ որպէս ջուրն դադարի 'ի վերայ օդոյն. և 'ի շուրջ գալն ոչ 'ի վայր ոչ հոսի. Քեզ օրինակ որ հաւատաս՝ զամանն տես. զի ամպն՝ 'ի ծովէ և 'ի գետոց առնու զջուրն, և վերանայ. և ածէ անձրև 'ի վերայ երկրի. և թէպէտ ջրովն ծանրացեալ է. այլ՝ առնու և վերանայ զջուրն. և հողմք 'ի ներքոյ անցեալ՝ առեալ գնան ընդ երկինս. և ոչ թողուն 'ի վայր ջուրն. այլ կայ ամենազօր հրամանաւն նոյ ծրարեալ յօդս. Ապա ըստ ակնարկութեան նոյ, անձրև է ուր և կամի. Այնպէս և ջրեղէն երկինքն որ է 'ի ներքոյ հրեղինին. և վերոյ օդոյս, շուրջ գայ անդադար ոչ գնն.

## Յաղագս երկրի, թէ ո՞պ շուրջ գայն երկինն՝ երկիրս հաստատուն կայ, և երկինք միշտ շարժի։ Գ

Ասեն իմաստունքն վս երկրի, թէ ոչ զսկուտեղ է. և այլք՝ թէ բոլոր ոչ զգունդ է. Ապա երկինքն պատեալ է զերկիրս, և երկիրս 'ի մէջ կայ. Երկնից հողմն՝ որ 'ի ներքոյ երկրի կայ, 'ի վեր փչէ և ոչ թողու որ 'ի վայր գնայ երկիրս. և իւր բնական ծանրութիւն՝ ոչ թողու որ 'ի վեր շարժի. և այսպէս՝ հաստատուն կայ 'ի միջոյին.

Ապա են 'ի մէջ երկրի հրոյ երակք, և է ջրոյ երակք, և կայ քամւոյ երակք. Ապա զի երկիրս ծանր է և 'ի վայր հակէ. և հողմն 'ի վեր մղէ, ջուրն որ 'ի միջոյին է, մղի ընդ հողն և յերար կափչի. և լինի սալպատակ, և խոտանոյ՝ և պնդի երկրային մարմինս. 'Ի տեղի ուր հրոյն երակքն կան. ջուրն տաք գայ 'ի

վեր

վեր. և ուր քամւոյն երակն կայ՝ թէ հնչէ քամին 'ի ներքոյ երկրի, տեղիք որ նօսր լինի՝ յերեսաց ելանէ՝ և շարժ լինի հրամանաւն այ, յորժամ կամենայ խրատել զմեզ.

Եւ այսպէս՝ երկինքն ևս արագ շրջագայութեն, ոչ թողու զերկիրս որ 'ի ներքեն կիսագունդն իջանէ. Եւ զի երկիրս ծանր է, և ջուրք ծովուն 'ի վերայ երկրի է, նա հողոյն և ջրոյն ծանրութիւն ոչ թողու որ 'ի վեր տանի. Եւ հողմն որ 'ի ներքոյ կայ՝ ոչ թողու 'ի վայր ընալ.

Եւ թէ օրինակ խնդրես, թէ ո՞րպէս կայ երկիրս 'ի մէջ երկնից. քեզ օրինակ ձու հաւուն, բոլոր դեղնուցն որ 'ի մէջն կայ՝ է նման երկրիս. և սպիտակուցն՝ օդոյն նման. և միզն բարակ որ յետ սպիտակուցին է՝ այն ջրեղէն կամարն է, և խեճեպն՝ հրեղէն երկինն. Եւ այլ օրինակ. 'ի կրետէս կղզին անդամանդ քար կայ տաճար է շինած, և պողպատ երկաթէ պատկեր է արարած, և 'ի մէջն թողած. ծանրութիւ երկաթին 'ի վայր հակէ, և զօրութի անդամանդ քարին 'ի վեր քարշէ. և կայ այսպէս հաստատուն՝ 'ի միջոցին 'ի կախ. Այնպէս և երկիրս՝ 'ի մէջ երկու կիսագնդեն երկնից կայ հաստատեալ բանիւ հրամանին այ. որ ասէ ես հաստատեցի զսիւնս նորա.

## Վասն ծովու և այլ ջուրց. Գ.

Երկրորդ աւուր արարչութեն հրամայեաց ած ասելով. ժողովեսցին ջուրքդ որ 'ի ներքոյ երկնից 'ի ժողով մի. և երևեսցի ցամաքն. և եղև այնպէս և զժողով ջուրցն կոչեաց ծով. Վասն որոյ՝ ասեն իմաստունքն թէ 'ի ներքոյ երկրի. և 'ի մէջն. և

շուրջ զեզերօքն ջուրք են յամ կողմանց։ Եւ զի ՚ի ներքոյ երկրի ջուր է․ վկայէ սաղմոսն․ Նա ինքն ՚ի վերայ ծովու հիմունս արկ երկրի։ Եւ ՚ի վերայ երկրիս են ջուրք ծովուն․ զոր անդնդական ծով ասէ։ Եւ շուրջ երկրիս ջուր է․ զոր ովկիանոս ծով անուանեն, և յայս ծովս՝ որ շուրջ զերկրաւ է, ոչ նաւ ելանէ ՚ի վերայ, և ոչ կենդանի կարէ բնակիլ ՚ի նմա․ զի սաստիկ սուր է, և որպաղապէս խառնմամբ հողմոյն՝ շուրջ գայ զերկրաւ։ Իսկ յայս ծովս որ ՚ի վերայ երկրիս է, ելանեն նաւք, և բնակեն կենդանիք․ զի կան ՚ի մէջն լերինք և բլուրք։

Եհարց՝ թէ ընչ պէտս են այս ամ ջուրքս զոր ասացեր մեզ։ Ե

Այս է պատասխանին՝ զի յամ ինչ՝ խառն է հուրն վասն պիտոյից։ Օդ և տունկք և պտղաբերք՝ ջերմութեամբ հրոյն հասանին։ Եւ այս հուրս զոր մարդիք ունին ՚ի պէտս, յայտնի է։ Այլ և ՚ի հարաւոյ կողմն կարի ջերմ է, և սաստիկ տապ․ ոչ միայն վասն արեգականն մօտոյն․ այլ՝ բնական հուր խառնեալ է ընդ օդոյն, և ՚ի բրն զջուր թանձրացեալ է օդն, զոր հրեղէն ծով անուանեն։ Վասն որոյ՝ արարիչն՝ իմաստութեամբ մեծաւ, նոյն չափովն և կշռով արար զջուրն, զի կացցէ ընդդէմ հրոյն։ Եւ վասն այսորիկ՝ պիտոյ էր վերին ջրեղէն կամարն, զի մի հողմոյն բռնութիւն՝ որ ՚ի ներքոյ նորա կան որպէս զախնակք․ ՚ի վեր վը-չեսցէ՝ և պատառեսցէ զերկնային կամարն, և կամ յիւր սահմանեալ տեղւոյն ՚ի վեր մղեսցէ։

Որպէս և յայտնի է տեսանել՝ զոր պատառէ հողմն․ որ և զհերձուածս՝ որոտ անուանեմք։ Եւ զի ջրեղէն կամարն՝ ՚ի միջոցի հողմոյն և հրեղէն երկնիցն,

արգել լինի հողմոյն։ Իսկ որք զհողմն 'ի վայր արգելէ ծանրութեն ջրոյն, նոյնպէս և կայ ընդդէմ հրեղէն երկնից, և լինի նման կերակուր, զի մի կիզեսցէ աշխարհ 'ի սաստիկ հրոյն։ Զի 'ի ջերմութէ արեգականն և 'ի հրեղէն երկնիցն, կիզեալ այրէր աշխարհ։ Վասն այնորիկ ջուր ծովու՝ արեգականն կերակուր լինի, և այլ լուսաւորացդ։ Նոյնպէս և ջրեղէն երկինն՝ հրեղէն երկնից զիմակ լինի։ Իսկ զի որք լոյս ճրագին, պատրուկն զձէթն ծծէ, և պակասեցուցանէ. և բժիշկքն՝ արտաքոյ զարիւնն ծծէ և քաշէ. այնպէս լուսաւորքդ՝ և հրեղէն երկինն զջուրսն։ Իսկ թէ հատանէր ջուրս՝ անցանէր աշխարհ, որք 'ի հատանել ձիթին, անցանէ ճրագն.

Իսկ այն ջուրքն՝ որ շուրջ զեզերբք երկրիս կայ. արտաքոյ քան զինքն՝ ոչ լերինք՝ և ոչ այլ դադարք կան, որ արգել լինի ջրոյն։ Այլ՝ սաստիկ հողմն խառնեալ ընդ ջրոյն, և արագագոյն 'ի շուրջ գալով՝ անդէ զեզերս երկրի. որ կայ՝ 'ի մէջ ոչընչի հրամանաւն Այ.

Զ. Ջուր ծովուն վասն էր աղի է. Խոս զի ինչ է պատճառն, որ այսքան գետս 'ի ծովն գնան, և ծովն ոչ լինի լցեալ, և ջուր չափէն ոչ ելանէ։ Զ.

Վասն այն աղի են ջուրք ծովու՝ զի ջերմութի արեգականն՝ ծծէ և քաղէ զքաղցրն՝ և զյստակն, և զանուշ ջուրսն, և յողդ հանէ։ Իսկ որ մնայ 'ի տեղին թանձր է և աղի և լեղի և պղտոր։ Իսկ վասն այն միակը շիռ մնան ջուրք ծովու. զի զոր մտանելով գետոցն յաճելու, զայն ծծէ արեգակն և պակասեցուցանէ. Զոր օրինակ՝ թէ լնուս ջուր 'ի պղինձս, և եդես հրով. շոգլին որ ելանէ պակասեցուցանէ զջուրն։

Ապա թէ ոչ լինէր ջուր, ամենայն ինչ պակասէր և հատանէր։ Նմանապէս իմացիր դու զայս, որ թէ ոչ մտանէին գետք ՚ի ծով, արեգական ջերմութիւն սպառէր և հատուցանէր զջուր ծովուն։

Իսկ այլ օրինակ քեզ՝ որ գիտասցես թէ զիարդ և զինչ ջուրն ծծէ ջերմութիւն արեգականն. վասն այն ջուր ծովուն աղի և դառն է. Արդ թէ յորժամ պակասի ջուր նաւորդացն, և ոչ գտանեն ջուր ըմպելոյ, վասն զի դառն է ջուր ծովուն, առնուն զաղի և զդառն ջուր ծովուն, և լնուն ՚ի կաթսայս և եռացուցանեն, և դնեն սպունգս մեծամեծս՝ (այն զոր ասեն) ՚ի փոխանս կաթսայիցն՝ և գոլորշին որ ելանէ. ժողովէ սպունգն զհիւթն, և քամելով զայն՝ ժողովեն ջուրս քաղցր և ըմպեն։ Եւ այս պատճառ, որ ոչ յաճախեն, և ոչ պակասեն ջուրք ծովուն։ Զի որ ՚ի վերայ երեսաց երկրի մտանեն գետք ՚ի ծովն և յաճախեն, այն ՚ի ներքոյ երկրի երակօք քամին և ելանեն ՚ի լերինս՝ և ՚ի դաշտս աղբիւրանան. և այս որ մտանելով գետոյն յաճախէ, ելանելովն աղբիւրացն պակասի։

## Վասն եօթնեկին երկնից որ են հաստատութիւնք։ Ա։

Ասացեալն գիրն ասէ, թէ արար նա զլուսաւորսն՝ և եդ զնոսա ՚ի հաստատութեան երկնից լուսաւոր լինել. Այս երկինս որ ՚ի յօդս է՝ բաժանի ՚ի յութ, եօթն՝ մոլորակացն կոչի, և ութ՝ մոլորագունդ անուանի. զայն որ մոլորականք են, եօթն պարունակ, և եօթն գօտի, և եօթն երկինք անուանեն, և յամէն երկինք է մոլորական մի։ Իսկ այսեն մոլորականքն ՚ի վերուստ ՚ի վայր անկանել. Զօհալ. Մուշթարի. Մա

Ք Ձ Ծ ռեխ

րիխ. Շէմս. Զօհրէ. Օտարիտ. Ղամէր. Այս տաճիկ լեզուաւ անուանքն. Իսկ 'ի հայ լեզու, Երևակ. Լուսնթագ. Հրատ. Արեգակն. Լուսաբեր. Փայլածու. Լուսին. 'Ի վերոյ քան զամ է Զօհալն, և 'ի ներքոյ ամէ է Լուսինն.

Եւ այն որ անձևալ գօտին է՝ են երկոտասան Կենդանակերպքն. և բոլոր երկինքն՝ է ևս երկոտասան բաժին. և ամէն կենդանակերպ՝ յերկինս իւր տեղի ունի. վասն որոյ՝ և իմաստունք զերկինս երկոտասան բաժին են արարեալ, և 'ի վերոյ կենդանակերպիցն և ի բնանց բնութեան բաժանեալ են. Եւ է աշխարհս մարդակերպ. Խոյն՝ ունի զգլուխ մարդոյն. և զայս բոլոր աշխարհն. Ցուլն՝ զպարանոցն, և աշխարհս զծառելա ցեր. Երկաւորն՝ զձեռքն և զուսքն, և ունի զաշխարհն զամբոյ. Խեցգետինն՝ զլանջքն և աշխարհս զհայաստան. Առիւծն՝ զոտն և կողքն, և աշխարհս զասխայ. Կոյսն՝ զորովայնն, և զաշխարհս զելլադացիք. Կշիռն՝ երկու կուշտն, և աշխարհս յերեւս. Կարիճն՝ անդամքն, և աշխարհս հրէաստանք. Աղեղնաւորն՝ բարձքն և երանքն, և աշխարհս զխոտաւէտ. Այծեղջիւրն՝ զերկու ծունկսն, և զաշխարհս զասորեստան. Ջրհոսն՝ սրունքն. և զաշխարհս զեգիպտոս և զհապաշ. Ձուկն՝ զերկու թաթ ոտիցն, և աշխարհ զհնդուստան.

Եւ է երկոտասան կենդանակերպքն յերկինս՝ երկոտասան ամիս տարւոյն, և ամէն կենդանակերպ է երեսուն աստիճան, որ է երեսուն օր ամսոյ. Եւ է բոլոր կ երկինքն՝ երեք հարիւր վաթսուն աստիճան, որ է երեք հարիւր վաթսուն օր տարոյն. Իսկ աւելի աւուրքն որ է հինգ օր՝ այլ մանրամասնից հա-

շիւ

չէ կայ՝ այն անտի լինել·

Եւ գիտացիր զի երկնից 'ի շուրջ գալոյն լինին ժամքն՝ որք քսան և չորս պահ առնուլն. և 'ի ժամանացն՝ լինին աւուրքն, և յօրերոյն՝ շաբաթքն, և 'ի շաբաթնոյն՝ ամիսք, և յամսոյն՝ տարիքն, և 'ի տարեացն լինի ժամանակն. Եւ է ժամանակն ծնունդ շարժման շրջագայութեանն երկնից ·

## Թէ որպէս շարժի 'ի շուրջ գայ գունդն երկնից· որպէս գնայ արեգակն 'ի շրջանն աստեղացն: Ը.

Եթէ կամիս գիտել, թէ որպէս 'ի շուրջ գայ երկինքն, և յայն շուրջ գալն թուեալ համարին ժամքն և աւուրքն, է այսպէս շրջել երկնից. յորժամ կէս կենդանակերպ 'ի վեր գայ 'ի վերայ երկրիս, որ է կէս կենդանակերպն՝ տասն և հինգ աստիճան. և տասն և հինգ աստիճանն պահ մի, որ է ժամ մի. և երբ լման կենդանակերպ մի գայ 'ի վեր, եղաւ յօրէն երկու պահ.

Եւ հասկացիր այս օրինակաւս. համարեաց թէ գարունն է՝ և արեգակն 'ի Խոյն. Երկու ժամ պահն
♈ ♉ Խոյն գայ 'ի վեր, երկու ժամ պահ այլ Ցուլն, երկու
♊ ♋ ♌ ժամ Երկաւորն. երկու Խեցգետինն, երկու Առիւծն.
♍ երկու պահ այլ Կոյսն. Այս վեց կենդանակերպս 'ի երկոտասան պահ աւուրն գայ 'ի վեր 'ի տիւն, և այս երեկունն լինի, և Խոյն՝ մտանէ ընդ արևմուտս 'ի ներքի
♎ կիսագունդն, և Կշիռն ելանէ յարևելս, և այսպէս հետ Կշռոյն՝ վեց կենդանակերպն այլ 'ի վեր գայ, մինչև 'ի լոյսն 'ի երկոտասան պահ գիշերոյն, և լինի ընդ օրն և ընդ գիշերն քսան և չորս պահ. Եւ դարձեալ Խոյն ելանէ. որ արեգակն 'ի ներսն 'ի յինքն կայ. այս մին կենդանակերպովս իմացիր զերկոտասանսն:

Եւ

Եւ զի՝ հանապազ վեց կենդանակերպ 'ի վերոյ երկրիս լինի, և վեց 'ի ներքոյ. Եւ ընդ օրն, և ընդ գիշերն մին շուրջ գայ երկինքն. Եւ զարեգակն և զլուսինն և զաստեղսն զկնի իւր 'ի շուրջ ածէ.

## Արդեօք որպիսի՞ գիտասցուք, թէ որքանութիւն հասոյ լուսոյ հորիզոն ընդ արևելս երկրին. Թ.

Բայց գիտասցիր և զայս, զի երկինքն՝ յարևելից յարևմուտս շրջի. Եւ արեգակն՝ և լուսինն և. աստեղք, յարևմտից յարևելս գնան, առ 'ի շէջ է հետևոյ՝ ընդ հարուած երջանենն. և դարձեալ 'ի հիւսիս՝ բարձրացեալ երթեն և լուսաւորքն հակառակ երկնային շարժմանն. Ոսր օրինակ մարդ մտանէ 'ի նաւ, և 'ի ջուրն 'ի վեր գնայ. գետն յորսամ է փութով անցանէ և դնայ. և մարդն՝ 'ի ջուրն 'ի վեր փոքր փոքր կարէ գնալ. Կամ զո՞ր օրինակ՝ թէ մրջիւն դնես 'ի վերայ ծաղցայն քարին, յոր կողմանէ քարն 'ի շուրջ գայ, մրջիւնն է դէմ՝ հակառակ նմա 'ի մին այլ կողմն շարժի և գնայ. Ոչ ապաք շրջագայութիւն երկանին յետս գէ զնա, և նա 'ի հարկէ 'ի մին այլ կողմն ընթանայ. և երկանն իւր արագութիւն տանի զնա է իւր շրջելով.

Աստանօր և զայս 'ի լուսնէն, զի յորժամ նոր ծնունդ առնու է մտանել արեգականն, յարևմտից կողմն երևի և որքան զօր դէպ յարևելս առնէ զգնացսն. Եւ երբ հնգետասան օր լինի՝ որ լրումն առնու, յարևելս երևի.

Նաև ուսիր, թէ այն՝ որ յամէն օր կու ելանէ յարևելից, և մտանէ յարևմուտս. այն՝ երկինքն է որ զնա է իւր տանի և սպառէ զաշխարհս. Բայց նոքին՝ իւր գնացիւքն է արևելս ընթանայ. Եւ այլ վկայ քեզ՝ զա-

րեգական գնացքն. զի կենդանակերպքն 'ի կարգի և 'ի կից են շր միմեանս. խոյն՝ և ցուլն՝ երկուորն և այլն: Եւ արեգակն կատարէ զխոյն՝ և 'ի ցուլն մտանէ. և զցուլն վճարէ՝ և յերկուորն մտանէ. և այսպէս 'ի տարին վճարէ զերկինքն, և զերկոտասան կենդանակերպսն. Եւ այն զոր ասացաք, որ յամէն օր կու ելանէ յարևելից, և մտանէ յարևմուտս. այն երկինքն է որ զնա կու բերէ:

## Յաղագս Չորս Եղանակաց Տարւոյն: Թ.

Եւ այլուստ շարժմամբ և ընթացիւք լուսաւորացդ. որ 'ի հիւսիսոյ 'ի հարաւ իջանեն. և 'ի հարաւոյ 'ի հիւսիս ելանեն. և սոսկ լինի չորս եղանակ տարւոյն. գարունն՝ և ամառն, աշունն՝ և ձմեռն: Զի չորս կողմն է աշխարհի, արևելք և արևմուտ, հիւսիս և հարաւ:

Եւ արարեալ են իմաստունքն զաշխարհ՝ երկոտասան բաժին. և մէջ աշխարհի՝ զեղերքն հնդկաստանն: Եւ 'ի հնդուստանէ դէպ 'ի կողմն հարաւոյ՝ չորս բաժին աշխարհիս այնէ՝ որ անմարդաբնակ է և անշէն, զի սաստիկ ջերմ է և հրախառն օդ. վասն այսորիկ դոտի ասեն: Եւ 'ի հնդուստանայ դէպ 'ի հիւսիս՝ եօթն բաժին է այս միջոցս և է բարեխառն, և առողջ հաճոյ. և մարդաբնակ և շէն աշխարհ: Եւ որ յայս եօթնեսս յաջորդ է 'ի կողմանս հիւսիսոյ, 'ի սաստիկ ցրտոյն և 'ի սառնամանեացն՝ անբնակ է 'ի մարդկանէ և ըշտեմարան և տեղի է ցրտոյ, և սառն օդոյ և հողմոյ:

Եւ զի կողմն հարաւոյ՝ հուր և ջերմ, տօթ և տապ է. վասն այն աշխարհի մարդիկքն յաւելի ջերմուէին՝ սև արջասպաւ ներկած՝ են թխացած:

Եւ այժմ զի դիտասցես զչորս կողմն աշխարհիս.

և

և այլ խմայիր. զի այն երկոտասան կենդանակերպքն որ
յերկինս են, ՚ի վերայ աշխարհիս բաժանեալ են ։ Օ ի
յորժամ ՚ի խոյն մտանէ արեգակն՝ ուստապաղ պահա-
մոլ լինի. խոյն ՚ի մէջ երկնից է. և ի ըդդիմաց՝ կշիռն
է յարևմուտս. զատն այն օրն և գիշերն հաւասար լինի
՚ի գարնանամուտն. և յայնմ հետէ տիւն՝ յաւելու օր
մեան մի ամէն. զի արեգակն բարձրանայ դէպ ՚ի հիւ-
սիս յամէն օր մեան մի, երեք կենդանակերպովն.
խոյ՝ ցուլ՝ և կաւր. և գարնան եղանակ լինի. Օ ի ♈ ♉ ♊
՚ի ժամանակ գարնան եղանակի՝ արմատք և բոյսք արձա-
կեն, մարդիք զուարթանան, ծաղիկք պայծառանան, և
անասունք, և թռչունք ՚ի ծնունդս գան։ Եւ այս երեք
կենդանակերպովս գնալով ընդ հիւսիս՝ և ՚ի վճարել
գարնան եղանակին՝ մտանէ արեգակն ՚ի խեցգետինն.
տիրէ ամառայինն. և սկիզբն լինի ամառնային եղանակին
և լինի յայնժամ՝ օրն հնգետասան ժամ. և գիշերն ինն։
և յաւելուլ ՚ի հիւսիսակողմն երեք այլս՝ կենդանա-
կերպովն՝ որ է խեցգետինն՝ Առիւծն՝ և Կոյսն, տա- ♋ ♌ ♍
նէ զեղանակ ամառնային. յամէն օր մեան մի ցածնալով.
Եւ զի ՚ի հիւսիսոյ կողմն է յայնժամ արեգակն, զցուր
այն հալածէ ՚ի ներքոյ երկրի. և զօդն որ ՚ի վերայ երկրի
ջեռուցանէ. և զխոնաւ դիջոյն՝ որ ՚ի ներքոյ երկրի
է ծծէ. և զսերմանիս և զպտուղս պատրաստեալ առնէ և
հասուցանէ։ Եւ ՚ի վճարել ամառնային կենդանակերպ-
սըն՝ մտանէ ՚ի Կշիռն. և սկսանի այնուհետև աշունն. ♎
և լինի բարեխառն և միջակ օդն. և դարձեալ հաւա-
սարին տիւն և գիշերն. և ապա փոքր փոքր տիւ աւուր
մեան մի խոնարհի, և իջանէ ընդ հարաւ. և փոքրանայ
օրն, և ցրտանայ օդն, և գայ մտանէ ՚ի յեղանակս ձը-
մերան։ Եւ ՚ի հեռանալ արեգականն ընդ հարաւ, և ՚ի

ցածանալն՝ գիշերքն մեծանան, և հիւսիսային հողմն
զօդն սառուցանէ. և հնչեն հիւսիսայինն սառնամանի
քըն, և լինի ձիւնաբեր փոթորիկք. Եթէ այս՝ միայնա-
բեկ լինի, զի արեգական ջերմութի՛ ՚ի հարաւ է ՚ի ցած
դիհն, և հիւսիսային հողմն զօրացեալ հալածէ զհարաւ-
ային ջերմօդն, ՚ի ներքոյ երկրի ընդ ելանել փակէ, և սա-
ռուցեալ պնդէ զերեսս երկրի. Եթէ միայնորիկ աղբեր
ակունքն՝ ձմեռն ջերմ և տաք բղխեն. զի արեգական
ջերմութի և հարաւային հրոյն զօրութ՛ ՚ի ներքոյ երկրի
մնեալ ջեռուցանեն զբնութի ջրոյ. Ապա և յամառնային
եղանակն՝ որ արեգակն ՚ի հիւսիս բարձրանայ՝ զցուր
տըն հալածէ, և ՚ի ներքոյ երկրի փակէ. և մի այնորիկ
աղբերքն՝ սառն և ցուրտ բղխեն.

Յորժամ այս երեք կենդանակերպովս շրջէ
♑ ♒ ♓ զձմեռն, որ է Այծեղջիւրն՝ Ջրհոսն՝ և Ձուկն, մա-
սըն մասն աճէ, և բարձրանայ և հանէ ՚ի մէջ երկնից,
և ՚ի Խոյն. որ և գարուն լինի.

Եթէ այսպէս ծանիր զշրջանն երկնից, և զգնացս
լուսաւորացդ, և զփոփոխումն եղանակացդ.

Վասն եօթն գօտեացն՝ որք են եօթն պարունակք. և կոչին
եօթն երկինք. ԺԱ.

Այս եօթն երկինքս՝ եօթն Մոլորականացն տեղի
♄ ♃ են. և մոլորականքն այսոքիկ են. Զօհալ, Մուշ-
♂ ☉ ♀ թարի, Մառեխ, Շամս, Զոհրայ, Օտարիտ, Կա-
☿ ☾ մար.

Իսկ յորժամ յերկրէս ՚ի վեր ելանես, Առաջին
☾ գօտին Լուսնին է. որ կոչի հռոմերէն սելինոս. Փռ-
անկերէն լունայ. տաճկերէն ղամար. և հայերէն լու-
սին. և է մօտ երկրիս քան զամ աստեղս. և իւր կնա-

ցից աստեղձանքն՝ նուրբ է և կարճ։ Զի իւր կամարն
փոքր է քան զամ՚ էն ցածունն. կենայ յամէն աստե-
ղձանս՝ երկու ժամ, պակաս չորս մասն. և ՚ի կենդանա-
կերպն՝ երկու օր և կէս. Լուսն և ինն օրն կէսն մը-
ձարէ զամ՚ երկինքն, և նոր ծնունդ առնու. և լինի ՚ի
նորէ ՚ի նոր քսան և ինն օր և կէս։

Երկրորդ գօտին՝ որ ՚ի վերայ լուսնին, Փայլածուն ☿
է. հոռոմերէն եռբէս ասի. գաղդիարէն մէրգու-
րուշ. տաճկերէն օտարիտ. և վճարէ զիւր երկինքն ՚ի
տասն ամիսն։

Երրորդ գօտին՝ Լուսաբերն է. հոռոմն աֆրո- ♀
դիտէս ասէ. փռանկն վէնուս վէնէրուս. տաճիկն զոհ-
րայ. ՚ի տասն ամիսն վճարէ և սա։

Չորրորդն՝ Արեգակն է. հոռոմն ելիոս ասէ. փռ- ☉
անկն սոլ. տաճիկն շամս. և երեսուն օր կենայ ՚ի կեն
դանակերպն։

Հինգերորդն՝ Հրատն է. հոռոմն արէս ասէ. ♂
փռանկն մարս. տաճիկն մառեխ. քառասուն օր կե-
նայ ՚ի կենդանակերպն։

Վեցերորդ՝ վերև Հրատին Լուսնթագն է. հո- ♃
ռոմն զէւս ասէ. փռանկն իուպիթէր. տաճիկն Մուշ-
թարի. ՚ի մի աստեղձանս երկոտասն օր կենայ։

Եօթներորդ՝ վերև Լուսնթագին՝ Երևակն է. ♄
հոռոմն կռոնոս ասէ. փռանկն սաթուռնուս. տաճի-
կըն զոհալ. սա ՚ի մի աստեղձանն կենայ երեսուն օր, և
՚ի երեսուն տարին պատէ զերկոտասն կենդանակերպսն։

Յաղագս ծիրոյն որ է հողմն, որ ասի ջամի։ Ժ. Բ

Այս սքանչելի արուեստն՝ զմին բնուն իբրայն ՚ի մա-
զուան բաժանէ. և բազում անուանք կոչի։

Զի 'ի չորս տարերայն միսն քամին է, որ օդ ասեմք· և այս միսս՝ ցնդայեղ անուանիք ունին. Զի ասի հողմին՝ քամի և օդ։ Իսկ ատակ լինի ամպն՝ ձիւնս, եղեամն· ու դեղն՝ որ իջանէ, որոտն, շանթերքն, ցոլմունք, և փայլակն, և այլ բազում իրք։

Թէ ուստի լինին այսոքիկ 'ի յերկրէ և յօդոյ։ Ժ·Գ·

Երկու գոլորշիք որ ելանեն յերկրէս 'ի վեր՝ որ ասեն բուխար· և 'ի վեր բարձրանան՝ նօսր և ան-տեսանելոց· մինն գէջ է, և միւսն չոր։ Այն որ գէջն է յաղբերաց՝ 'ի գետոց և 'ի ջրոց ելանէ· և այն որ ցա-մաքն է 'ի չոր և 'ի ցամաք գոլորշեայն լինի, և 'ի հող-մոյն ուղղ գծուլս վերանայ։ Այն որ գէջն է՝ անտի լինի բոլոր՝ սառնամանիքն՝ ամպք՝ անձրեւք ձիւնք կարկուտք· և այն որ չոր գոլորշին է՝ որ է բուխարին յաշխարհէս, անտի լինի ազգի ազգի հողմք՝ որոտմունք՝ փայլատակ-մունք՝ կայծակն՝ հրձգուն, և այլ որ ինչ սոյնն նման է։

Զի՞նչ է Մէգն։ Ժ·Դ·

Նա այն 'ի զօրութ ամպոյն է. զի յորժամ օդն թանձ-րանայ, բոլորանայ· և է բոլոր քան զօդն թանձր և քան զամպն նօսր· և ունի սա կաւ մի գիջութ, որ խո-նաւութիւնէ զերեսս երկրի· զոր կոչեմք և մառախուղ։

Զի՞նչ է Որոտն և Կայծակն։ Ժ·Ե

Յորժամ հողմն որ է քամին՝ բանտութ հնչէ՝ և 'ի մէջ ամպոյն մտանէ, յայնժամ զթանձր ամպն պատառ-է, և լինի ձայթմունք 'ի պատառմանէս· զոր և որոտ անուանեմք· և 'ի հողմոց յերար շփելոյն և 'ի ձնշելոյն

հուր

հուրմայէ, զայն փայլատակմունք ասեն և կայծակունս։ Ո՛վ հուրն յամ արարածս խառն է, և ամենայն յօդ. և նոր հատանի հուրն յամպոյն, թէ թանձր եղանի, յերկիր անկանի և վնաս առնէ. և թէ նօսր եղանի՝ ոչ թափուն օդքն յերկիր, այլ ՚ի օդն ցնդի անվնաս։

Զմեռն՝ որոտ էր ոչ լինի և կայծ. Ժ.Օ.

Բանզի ձմեռան ամպն նօսրագեր է. զի ձմեռան հիւսիսային հողմն հնչէ, այն նօսրացնէ զամպն, և սառեալ ցրտանայ ամպն. զի հարաւային օդն է որ թանձրացուցանէ զամպն։

Ուստի է՞ չնչէ զերկիր է որոտումն. Ժ.Ւ.

Բանզի ՚ի թանձրութէ ամպոյն՝ և ՚ի բռնութէ հողմոյն՝ չկարէ անձրեւն ՚ի վայր հոսել. եւ ՚ի գաւառն՝ և ՚ի պատուելոյն թուլանալ հասանոր, և արկանէ զանձրեւն։ Ուր զոր օրինակ մայր՝ զմանուկն յորժամ ծնանի, մեծաձայն գոռայ. և վասն այն գոռայ, վիղ հոգին յինքն քարշէ. որ զշնչական երակսն նեղէ, և զմանուկն ՚ի վայր բերէ և ծնանի. Նոյնպէս և երկիր սառուցեալ և պաղեալ է ՚ի ձմեռնային ժամանակի, և զմնդել զընուն հողոյն. վասն այնորիկ՝ պէտք է ձայն որոտալոյն, զի թուլացի ընդուն հողոյն, և բոյսք և սերմունք յերկրէ ՚ի վեր ծնանիցին, և ծառքն ծաղկիս փթթեսցեն. և ամենն՝ ՚ի ձմեռնային կապանացն ՚ի բաց արձակին։

Յաղագս Ձեան և Մրրկի. Ժ.Ր.

Յորժամ արեգակն ՚ի հարաւային կողմն ցածանայ ՚ի խոնարհ, յայնժամ հիւսիսային կողմն զօրանայ և զօդն յերկար խառնէ՝ և թանձրացնէ, որ ամպ լինի

և

8401-57 267

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
ՀԱՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

և կորստեան, և ՚ի վայր հոսեալ սպիտակ և փոփոխեալ.
զի յաւելու քամին՝ մնալով ջրոյն. այսպէս ասեն.

Իսկ թանձրք և մեծ թանձի ՚ի վերայ, այն առաջատարեալ
ըստ ամի. և որ նոսր և մանր՝ այն ձիւն կոչի. Իսկ ՚ի
գարնանային ժամանակին՝ և յաշնանայինն և յաշնանայ
ինն՝ օդն ժողովէ զջուրն ՚ի ծովէ և ՚ի գետոց, և առ
նել յերկրէ ՚ի վեր բարձրանայ, և ՚ի բաց ամպոց թա
թաւեալ լինի անձրև. զի ՚ի դարնան ժամանակին օդն
պարարտանայ ՚ի դիջուցէ ջրոյն, և յարեգակնն ջեր
մուէն թանձրանայ և խոնարհի ՚ի ծովն, և առնել բարձ
րանայ. զի հողմն ՚ի ներքոյ անցեալ՝ առնել ամպ. և հող
մոյն գաւառայինն և որոտալոյն՝ օդն պատառի և թուլա
նայ, և անձրևն ՚ի վայր հոսի.

## Յաղագս Կարկտի. Ժ. Թ.

Կարկուտն լինի ՚ի սաստիկ և ՚ի նոյն բաւ քամւոյն, որ
յինչ ՚ի հիւսիսոյ կողմանէ. և ՚ի սաստիկ փչմանէ
հողմոյն՝ այրեցեալ առնու և պնդէ զնօսրութի ջրոյն, և
շաղեալ յերկիր թափէ. է որ ուժով և խիստ. և է որ
նուազ. և այս լինի ՚ի յերկրորդ և ՚ի յերրորդ հասա մերձ ցերեկոյ.

## Թէ զուարթ լինի Ցօղն և Եղեամն. Ի.

Յուսաւորք՝ օդով գջուրն ծծեն և ՚ի վեր քարշեն.
Որք արդարեւն ծագէ, թուլացուցանէ զօդն. և այն
որ մնայցեալ է ՚ի յօդն՝ ՚ի գետնին իջանէ և ցօղ կոչի այն
իսկ ՚ի ցուրտ ժամն՝ թերասառայ լինի և կոչի եղեամն.

## Զինչ է Մեղրն՝ որ իջանէ, որ ասեն Թրանջ գազէ. Ի Ա.

Պատճառ աղեղն իջանելոյն՝ գիջուէ օդոյն է և ջեր
մուէ արեգական. Զի ՚ի փարատել անձրևին՝ զի
ձուլին՝

ձուկն՝ որ յօդն է մնացեալ, և արեգականն ջերմութեն յերկար խառնեն. զայն դիձուկն 'ի ներքուստ, և արե գականն նշոյլքն 'ի վերուստ մտաբանեն, և 'ի նօսրութ օդոյն՝ գունագոյն և երփներփն երևի կամարաձև՝ որ ծիրանային գօտունդն։ Մի դոյնս երկրէս՝ և կանաչադեղ թուխոյն՝ և ջրոյ և հրոյ՝ յերկար խառնեն, և այնպէս երևեին։ Թէ մեկ մի է գօտին որ երևի, նշան դադարե լոյ անձրևին է, և պարզելոյ. և թէ երկու երևի յայլ և այլ դէհ, զօրոդ և զատտակի անձրև նշանակէ։ Իսկ 'ի սկզբանէ աշխարհիս էր սա զի հետևանք է տարերցս. որպ ծանուցն հետևանք է հրոյ. որ քամելով ջախանա ուն 'ի հրայծն կուկոյն, և ապա յըստակի բոց հրոյն։ Մտայտա բեկ եաւ ած 'ի նշանս՝ 'ի յորդութ անձրև այն դատաստան։

Թէ զինչ է հողմն որ յերկինս երևին և ազանիք տեղի ԻԲ

Ազգ մի՝ որ շանթ կոչեն, որ 'ի հրեղէն երկնից կայծակաւ և 'ի վայր հոսի, և չէ զգալի որ... այլ յորժամ յերկինս անկանի, ծակէ զթանձրութ երկրի, և զոր ինչ գտանէ այրէ, և չը թափէ 'ի վայր. Նշանէ 'ի ներքև կիսագունտ յեւր ազդ ակնոյն ուսանի անկեալ է.

Այլ է ազգ մի՝ որ յորժամ 'ի բաստակ ամպոյն հող մտեալ ծոծի խառնակի, որ յաստակ ծովուն և ուսայն յե րեսն շրջի, և օդն ամենայն զաւակն խառն ջուրն, և 'ի վեր վերայնէ ջրոյն, և տանի 'ի բարձրն՝ 'ի հրախառն, և 'ի տապ օդն փչէ և շնէ, և փակէ որպ զհուր, և 'ի վայր թա փէ. և յորժամ յերկիր հասանի՝ յոր ինչ դիպի այրէ և անցանի, և մեծ ոչ երկաթի քարշայ.

Այլ է ազգ մի՝ որ ասեն թէ առողջութեան. և աս տղ՝ ոչ թէ չի. այլ յորժամ չը շրջակայ պարունակս երկ նից հնչէ, և սաստիկ արտաքոյ անցանէ չը որոտմամբ,

զօդդ որ առաքէ և հրախանն՝ ոտ զձոր պատառէ, և եր-կայնութեն եւ, և թուէի թէ աստղ թռեալ։

Ո՞ր է այդ մի՝ որ ՚ի պատառել օդոյ ՚ի բազմաց հողմոյն՝ վերին լոյսն հրակերպ երևի. և օդն որ պատառեցաւ յիւրում գայ և ՚ի կցելն ծածկի դարձեալ. և մեք կարծեմք թէ աստղ թռաւ.

Նոյնպէս և այն՝ որ կայծկլտայ ասեն. զի յորժամ ամպն պատառի, ՚ի դրունս լոյն որոտն լինի. և յիւրում շփե-լոյն կայծակն լինի։ Որպէս հրահան երկաթն՝ որ զկայծ-քարն բախէ, ելանէ ձայն, և ելանէ հուր. նոյնպէս յոր-ժամ հողմն զամպն պատառէ, ՚ի պատառելն զորոտն տանէ, և հողմն ՚ի յամպոյն հուր հանէ, և ՚ի կանգնել իւր անկանի ՚ի վայր է։

Յառաջն որոտն է, և ապա կայծակն. բայց մեք յա-ռաջ զհրոյ լոյսն տեսանեմք, և ապա զորոտն լսեմք. զի աչքն այլ սուր է քան զականջն. և աչքն յհեռուն տե-սանէ, և ականջն զմօտն լսէ. վասն այնորիկ զլոյսն ՚ի հե-ռուն տեսանեմք, և յորժամ ձայնն ՚ի վայր հասանի և մօ-տի ՚ի մեզ ապա ականջն լսէ։ Ո՞ր այս յորժամ ՚ի պարզ ժամն լինի, թռուցած աստղ ասեմք։

Թէ զի՞նչ է այն որ Լուսինն բակ ունենայ։ ԻԳ

Թանձր օդդ՝ որ ունի բոլոր զձևս ստացայթ լուս-նին, և նշոյլքն ՚ի դուրս ելեալ ՚ի թանձր օդն՝ բոլորակ լինի. և է նշան ամպոյ։

ՎԵՐՋ

առաջնոյ մասին տետրակիս ։

ԱՄԷՆ

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ։

Յաղագս որ 'ի նմա եղելութեանցն՝ ծանուցանողին.

Զօրութիւն Աստուածաւոր բանիցս՝ նախ՝ զաշխարհացս դրութիւն և զկարգ ցուցանէ. և ապա՝ զի 'ի շարժմանէ և 'ի շրջագայութենէ երկնի՝ ծնանին ժամանակք՝ և կենդանիք և բուսականք, որք 'ի ժամանակի. զոր խնամատուեք սահման եդին բնութե, այս է ամենայն արուես-տին. և առաջին զբնութիւն ծննդեան շարժման և կայանի, այս է շարժմանն երկնի, և կայականութեան երկրի.
Եւ ապա թէ՝ ո՞ղ ամենայն արուեստաւորին է դրութիւն աշխարհաց խնամօքն, զոր օրինակօքդ ցուցանէ։ Եւ թէ՝ զիարդ կայ հաստատուն երկիր, և ո՞ղ 'ի միջի կայ երկնի։ Նոյնպէս և զհրեղէն երկնի՝ և զհաստատութեանդ զանազանու-թէ՝ ո՞ղ զանազանեն բնութ. և զմոլորականացդ՝ և զանձն-ցոր աստեղացն զկայանսն։ Եւ թէ զաշխարհս 'ի վերայ կամին կենդանեացն ո՞ղ են բաժանեալ։ Եւ թէ մոլար աստեղքն 'ի կենդանակերպսն՝ ո՞ղ են զանազանեալ բնու-թեամբ և գործով. և զինչ նշանակութիւն ունին։ Եւ ա-պա 'ի նորբեն զօտիդ սկսեալ՝ որ է լուսին, և զի օթն զօ-տիսն. ասէ և զաստեղսն որ 'ի նմա, և զբնութիւնս նոցունց. կամ՝ զինչ գործ և ազդումն նշանակին՝ որ 'ի նոցանէ լի-նին. և զինչ օգտակար 'ի նշանացն՝ զոր յաղագս մերոյ օգ-
տի՝

տի՛ եդ 'ի նմա ծած. Իսկ յարեգակնէդ՝ ուսցիս զփափա խումն եղանակացդ, եւ զընթացս լուսաւորացդ. եւ թէ քանի՞ բաժանի աշխարհս, որ տիւն եւ գիշերն՝ ամիսքն եւ նուազելոյն փոփոխմունս.

Ո՞չ թէ չէ՞ վայրապար գիւտ եւ քննութիւն իմաստասի րացն։ Ո՞չ թէ յայտ է եղեւ 'ի քննութեան աստեղացն՝ որ մի մեր օգտի՛ նշանք եւ գուշակմունք երեւի 'ի նմ. եւ զայդ օրինակս սովորեցեալ են. որ չէ զարմանք՝ թէ յաստեղ ացն՝ ամ փոփոխումն է եղեալ. Ո՞չ թէ փոխի՞ զուսումն [illegible] նախատեն զք, զոր չէ պարտ ուսանել. եւ թէ ասէ զինչ է պատճառ. Ո՞չ պատճառ այնմ թէ՝ է՞ր խոտելի աստեղա ցըն բանն։

Ո՞չ ապա՝ ներբողական զովեստ երկնի. թէ ո՞րքան լուսաւորօքդ՝ յիմաստութիւն վերծէ զմեզ դու բը նական օրէնք ասեմք։ Ո՞չ ապա՝ այլարինութ եւ բարեյա կանարար՝ զլուսնին եւ զարեգականն զգործ եւ զկերպ՝ 'ի խրատ բնութեն մարդկան։ Ո՞չ թէ լուսինն օրինակ էր հը նոյ օրինացն, եւ արեգակն՝ աւետարանին, եւ աստեղքն մարգարէիցն։ Ո՞չ ապա՝ զգալի արեգակն՝ յօրինակ առ եալ քեզ իմանալի արեգականն արդարութեան. եւ զերջանիկն 'ի հայրական ծոցոյ, եւ զբանին մարմին լինելն, եւ 'ի կու սական ծննդենէն զանօրինական ներգործութիւն մինչ 'ի մեռեալս անգամ զպլուսան՝ համառօտել եւ մեք ուղիղ դա ւանութիւն, եւ անդ առաջարկեալ։

Այսկարճառօտ զօրութիւն որ 'ի սմա. եւ որք աշխա տասիրաբար մտադնեն՝ յոլովս գտանեն զօրութիւն 'ի սա կաւ բանիցս՝ իբր պատճառս առաւել իմաստից։ Այլ՝ այս մնչ ծանօթութիւն, եւ պտղոթիւք ձեռուք յանցանց մերոց զթողութիւն.



Նորին՝ ՄԷ և Իմաստուն Մարգարէին Յօհաննէսի Երգն խոյեցոյ էան՝ յաղագս երկնային զարդուց՝ շափաէէրմամբ, Նմանդերոյ Բարեգաղշտ Իշխանին Մոզրոյի. ըստ Ձախագին ա- ճիւ տանց.

Յամենահրաշ՝ գործս արարչին՝ որ գոյա ցան.
մեծ և ահեղ՝ սքանչելիք՝ ներգործե ցան։
Ոմանք ՚ի տես զարմանալեաց՝ յօրէնե ցան.
և այլք ՚ի պէտս՝ վայելչութեն՝ մարդկան տո ճան։
Զանբաւականնաց՝ արարածոց՝ մասունք լըր ման.
՚ի յերկնաւոր թիւ տարբորոշեալ՝ բաժանե ցան։
Աշխարհի ակիզբըն և հիմունք՝ հաստատե ցան.
՚ի յերկնուս ան՝կիւնագիծըս առ կայա ցան։
Նախ երկնային՝ բոլորակին՝ բանք ձևաւ ցան.
մերձ առ նորին՝ հաստատութեն՝ երկնի ե- դան։
՚Ի մովսիսէ՝ մարգարէիցըն նախնա կան.
զի այսպէսին՝ առ ձայնելով՝ անուճանե ցան։

Սոքա չորից՝ տարերց մասունք՝ ընկըզընա կան·
յորմէ մարմինք՝ տարրականաց՝ հաստատե ցան·
՚Ի հող և ջուր՝ բնութեն հողոյ՝ որ ըստորա ցան·
ցրտին և դէջ՝ բնութեն ջրոյ՝ որք խառնե ցան·
Բաղկացութիւնք՝ երկրիս կայից՝ կատարե ցան·
որք միշտ անշարժ՝ կային շարժին՝ յեղյեղա կան·
Օդ և զինին՝ բնութեի օդոյն՝ և ջերմա կան·
որ ընդ հրոյ՝ ջերմին և չոր՝ մերամերձ ման·
Նմանապս՝ կամարն երկնի՝ խորան ձգե ցան·
որք միշտաշարժ՝ շարժմամբ շրջին՝ անյեղա կան·
Յոր իմաստունք՝ ներհմութեան՝ յայս փորձե ցան·
և եդական՝ բնութեն գործոց՝ եղեն սահ ման·
Ինքն զբնութեն ծննունդ շարժման՝ որք կայա նան·
որք ՚ի շարժումն՝ և յանշարժից՝ տարերց ծը նան·
Դ եկօք թե ոչ՝ կրկին բնութեն՝ միշտ ընթա նան·
որք ՚ի ծովու՝ այսմ աշխարհիս՝ կան ծփա կան·
Արդ շարժելով՝ բոլորն երկնի՝ ան ննա կան·
միշտ պնդելով՝ զկայանս երկրի՝ անզգաստա կան·
Գնղեցկացոց՝ մնալով սմին՝ հաստատա կան·
ոչ ցրուելով՝ տարրին բնութեն՝ ըստ տաճրա կան·
Այնպէս անշարժ՝ բնութեն երկրի որ գոյա ցան·
ինքնամբ պրկեալ՝ պարարերէ՝ զերկնի շուր ջան·
Տերկոքումբ՝ բնական կրիւքն՝ անլուծա կան·
միմեանց լինին՝ նիւթ և պատճառ՝ յարմարա կան·
Որպէսից՝ տարերց մասունք՝ որք խառնե ցան·
անքակտելի՝ սիրով ՚ինոյն՝ յարմարե ցան·

Սատարեցան զօրութք աշխարհին՝ որք էա ջան.
յանմահ բանին՝ արարչական՝ որով ստեղ ծան.
Նոյն արարիչըն հրաշագործ՝ զարմանա գան.
ոչ թէ բանիւ՝ միայն արար՝ անքննա կան.
Նախին արուեստըս հանճարոյ՝ իմաստնա կան.
եւ ՚ի բնութեն տարրածոյըս դասա կան.
Արարողին կայս կայացեալ՝ հող ծանրա կան.
մերձ առ նմին շարադասեալ ջուր դիւրա կան.
Խառնամածեւ՝ կամարացեալ՝ օդ վերնա կան.
զօրոյն բնաւ՝ շրջապատեալ՝ հուր կիզա կան.
Նըման նըմին՝ քեզ յարագայըս ցուցա կան.
յանօթ արկեալ՝ աւազ եւ ջուր՝ իւղ նիւթա կան.
Իւր ամանոյն՝ եւ նիւթ իւղոյն՝ առ վերոյ կան.
Ներքոյ աւազ՝ եւ զկնի ջուր՝ զետեղա կան.
Բայց էից՝ բոլոր մասանց՝ պարագրա կան.
օդ ընդ հրոյ՝ հողմոյ շնչմամբ՝ վեր ամբառ ձան.
Որով երկերս՝ այս գնդաձեւ՝ առ կայա ցան.
՚ի միջոցի՝ աստ մնալով՝ անշարժա կան.
Նոյն եւ այլ՝ քեզ օրինակ՝ համանը ման.
զձու հաւու՝ առ գաղափարըս տեսա կան.
Շրջապատեալ՝ կեղեւըն կարծր՝ եւ նիւթա կան.
որպէս հրեղէն՝ արփւոյն կամար՝ պարարձգե ցան.
Խորանն երկրորդ՝ զկնի սորին՝ օդոյն նը ման.
որ մղնաձեւ՝ ընդ խէձկայոյն՝ ՚ի կառուց ման.
Այլ եւ երրորդն՝ է սպիտակուցըն ջրոյ նը ման.
եւ դեղնագոյնն՝ առ միջոյածըն գնդա կան.

Նոյն

Նոյնպէս երկիրս՝ առ միջոցի՝ յարաժամ կան.
անսիւն անանց՝ և 'ի վերուստ անկախ կան։
'Ի ներքուստ՝ հողմոց հնչմանց՝ ընդդիմամ կան.
և բընակչացն՝ իւր ծանրութիւն՝ ոչ ամբառ նան։
Հաւասար՝ մեցակցուսի՝ են գաւառ կան.
զառ 'ի վեր՝ և 'ի ներքուստ՝ ի կողմնա կան։
Արդ 'ի յերկրորդ՝ աճուրքն մեծ՝ արարչու թեան.
յորում հրամանն՝ եղ յարարչէն՝ հաստատու թեան։
Յորդ հնչմամբ՝ ջուրք 'ի ջրոյ՝ բաժանե ցան.
և հրեղինի՝ արփւոյծ կերպ՝ դիմակ ար կան։
Որպէս զի մի՝ զաշխարհ լուծցէ՝ տաչօրա կան.
սաստիկ հրրատքն բոցագոյն՝ և կիզա կան։
Ջուրս ընութիւն՝ իւր ջուր լինի՝ կերակրա կան.
զի մի աշխարհ՝ ըսպառեսցի՝ 'ի հրոյն լուց ման։
Այսոքիկ՝ երկլին միմեանց՝ են յատկա կան.
արագապէս՝ շարժմամբ շրջին՝ անլռա կան։
Պարուեալ՝ շրջափակեն՝ զգունդն երկրա կան.
և 'ի միմեանց՝ են հեռաւորոյն՝ նոյն չափա կան։
Լայնութիւն են՝ չորեք կուսի՝ եղերա կան.
և խորութիւն՝ ընդ բարձրութիւն զուգա բան։
Ունիս սոքօք՝ իմաստութիւն քեզ բաւա կան.
որով պատմես՝ զփառս նոյ՝ անճառա կան։
Յընծայ հոգւով՝ 'ի յարարածս՝ այս եղա կան.
գովել զանեղն՝ 'ի յեղելոցս՝ անմահա կան,
Արդ մինչև ցայս՝ վայր խօսեցեալ՝ բանք նախնա կան.
յաղագս երկուց՝ կիսագնդացն՝ եռայար կեան։

Նութ

Նիւթ ցանկալի՝ ուսումնասէր՝ մնացմանդ կան.
որով կրթէին՝ վարժմամբ բանի՝ տեսողս կան.
Ուսուի շարժմանց՝ զարդուն երկնից՝ տեղեկս նան.
և յարկածից՝ աստղագայլին՝ գգուշա նան.
Խուսեալ պատկ՝ բանից կարգի՝ յարմարս կան.
՚ի զարդ գլխոյ՝ բանասիրիդ՝ յոյժ ըղձա կան.
Նոյն և նշան՝ անլուծ սիրոյ՝ եղբայրս կան.
և [illegible]գ յանձնիւրս՝ ժամանակայ՝ պատճառ յիշման.

## Նորին փառայեալ՝ յաղագս Երկնի.

Այն որ յառաջ՝ քեզ ձայնեցան՝ բան նախնական.
յաղագս երկուց՝ տրամադրիցն՝ անկենական.
Այէ տարերացըն դաս կարգէ միջնորդս կան.
և արուեստից՝ խառնուածոյն՝ յարմարս կան.
Նալ վերասէն՝ դառնամք ՚ի նոյն՝ բան բաղձա կան.
և սկսանել մեք՝ յաղագս երկնի՝ ըստ հետև ման.
Այլ զի անձամբ՝ յայս ձեռնարկել՝ չեմք բաւա կան.
զհոգին նոր՝ վերակարգամք՝ մեզ օգնա կան.
Նախ զառաջինն՝ զերկինն յիշեմ ըզվերինս կան.
և հաստատուն՝ իսկ անցանելի՝ անքննա կան.
Զոր և եթեր՝ զսա կարդացին՝ ազգն յունա կան.
և հուր լթաղկեալ՝ այնք որ յեզուան՝ քաղդէա կան.
Իսկ է հրատ՝ նա բոցագոյն՝ և պարզա կան.
մարմին աննիւթ՝ և անչարչար՝ անհատա կան.
Ոչ է ումեք՝ ո՛չ ոք ՚ի նմա՝ այլ զատա կան.
զի հինգերորդ՝ է ՚ի չորից՝ առանձնա կան.

Մարգարէք՝ տեսութեան՝ անձնատուա կան.
ձայնեալ ընդդէմ՝ լուսաւորչեանցն՝ անմոռացուա կան։
Օ բոլորքս ընտրեալ՝ չքնաղատեսակ՝ զօրէն ձեռնտու ան.
արքայակէս՝ առեալ շքեղան՝ անտեսա կան.
Բոց բոլորեայ՝ կանթեղ թագուլ՝ առեալ ըզ բան.
և գերկերպեալ՝ սիրայ ձեռնել՝ յօժարա կան։
Ա՛ռ երջնյան՝ երկին երկրորդ՝ հաստատա կան.
որ ՚ի ջրոյ՝ և ՚ի յոգւոյ՝ անճառանե ցան։
Ա՛չ պայծառ՝ ոչ թանձրացեալ՝ այլ լուծա կան.
որպէս բղխու ըս այս որ առ մեզ՝ են հաստա կան։
Իսկ ՚ի յողոյ՝ փոխեմաթ եղեալ՝ որպէս խո բան.
զգլխեմանձև՝ կամարացեալ՝ նման ձեռն ան։
Նոյնպէս և հողմ՝ և օդ սփռեալ՝ տարածա կան.
որպէս յանօթ՝ էնչ ժողովեալ՝ ՚ընկութա կան։
Ըզձև առեալ՝ վերին երկնի՝ միշտ շրջա կան.
լուսաւորացդ՝ եղեալ սա տուն, և կայա րան
Որում վկայեն՝ դէրք գործոցըն՝ առարչա կան.
թէ եդ զնոսա՝ ՚ի յերկնային՝ հաստատութ եան։
Բայց որոշման՝ սոցա տեղիք՝ են զանա զան.
զոր մոլորակ՝ աստեղքն ունին՝ ընթացա րան։
Եօթնաստեղեան՝ անճառանեցան՝ սոքա խո րան.
յամենց գօտիք՝ և պարունակք՝ պարբերա կան։
Մի քան զմի՝ են գերազանց՝ վերադրա կան.
և ութերորդ՝ գունդն անմոլար՝ և բարձրա կան։
Յոր կերպարանք՝ են կենդանեաց՝ երկոտա սան.
որովք բոլոր՝ կամարն երկնից՝ յոյս չափե ցան։

Նոյն և երկրիս՝ հաստատուն՝ տեղի կա    լան.
Յուր ըստ բնականին զօրուն՝ ազդեն նը    շան.
Ծ ի և աշխարհ՝ կերպարանօք՝ մարդոյ ցու    ցան.
և երկնային՝ բոլորակին՝ միձակէ    ցան.
Խոյն է գըլուխ՝ որ է աշխարհըն պարսի    կան.
Ցուլ պարանոյն՝ որ են կողմանք՝ բաբելա    կան.
Երկուորին՝ ձեռքն են և ուսքըն գամիրա    կան.
և խեցգետնի՝ լանջք կոչեցեալ՝ են հայաս    տան.
Առիւծն ողին՝ խիկ և կողեցն՝ ասիա    կան.
Կուսըն ներքին՝ որովայնին՝ եղլադա    կան.
Կըշիռն որ է՝ կըշտոցն երկուց՝ լիբիա    կան.
Իսկ և կարիճն՝ է անդամոցն՝ ազգ կրետա    կան.
Աղեղնաւորն՝ բարձքն և երէք՝ իտալա    կան.
և այծեղջիւր՝ ծունկք երկոքին՝ ասորես    տան.
Ջըրհոսին սըրունքն՝ է աշխարհին եգիպտա    կան.
և ձուկըն թաթք՝ ոտիցն երկուց՝ է հնդկաս    տան.
Երկոտասան կենդանակերպաքս՝ որ կոչե    ցան.
ըստ համարոյ՝ ամսոց տարւոյն՝ հանդունա    կան.
Եւ աստեղանքն՝ որ 'ի նոսայ՝ երեւնա    կան.
աճուրց ամսոյն՝ են պաղաթիճ՝ և համա    բան.
Իսկ բոլանդակ՝ կամարն երկնից՝ համարա    կան.
երեք հարիւր՝ վաթսուն թ․ճով՝ են աստի    ճան.
Արովք ըստ նոյն՝ թիւճ համարոյ՝ աճուրք ծը    նան.
յերկոտասան՝ ամիսք տարւոյն՝ որ գոյա    նան.
Ծ-ողում ըղձինգ՝ թիւճ աճելեալ՝ անքննա    կան.
զի խոր ունի՝ այն տեսութիւնքս մասնա    կան.

♈ ♉ ♊ ♋ ♌ ♍ ♎ ♏ ♐ ♑ ♒ ♓

Գործայց 'ի նոյն՝ կերպ կենդանեայն՝ երկոտա սան.
և ըզընութեանցըն ձաւեցից՝ նոցա սահ ման:
♈ ♌ ♐ Խոյն և առիւծն՝ հաղեղնաւորն՝ են ջերմա կան.
չոր և հրայեն՝ ընութին իւրեանց՝ այրեցա կան.
♉ ♍ ♑ Ցուլն և կոյսըն՝ և այծեղջիւրն՝ են հողա կան.
հող են և չոր՝ և երկրային՝ ցամաքա կան.
♊ ♎ ♒ Երկաւորըն՝ կշիռ և ջրրհոսն՝ են հողմա կան:
ջերմ և կակուղ՝ են ընաւորեալ՝ դալարա կան:
♋ ♏ ♓ Խեցգետինըն՝ կարիճն և ձուկն՝ են ցրտա կան.
գէջ և ջրային՝ են զօրութեամբ՝ և զովա կան:
Արդ չորից՝ տարերց ընութեան զուգե ցան.
'ի յարարչէն՝ իմաստուն՝ կըշռե ցան:
Բաժեղք մոլարք՝ որք ընդ նոսա՝ միշտ ընթա նան.
ունակայեալ՝ ընութեանց նոյին՝ պարզումըն տան:
Ազգս նըման՝ են շինուածոց՝ որպէս ըզ տան.
որք և անշարժ՝ կան 'ի տեղւոջըն յաւէտ եան:
Մոլարք. Բաժեղք նըման՝ ուղևորաց՝ են անցա կան.
որք 'ի նոսա՝ իջևանին՝ և ընթա նան:
Յորժամ 'ի նոյն՝ ընուլ մտանեն՝ հանդիպա նան.
անձնուեր բարեաց՝ և քաղցրութեան՝ տան մեզ նըշ ան:
Իսկ 'ի նոցունց՝ հակառակացըն պատա հան.
ցուրտն ընդ ջերմոյ՝ չորն ընդ գիճի՝ խառնաւա կան:
Յաճք և հարուածք՝ 'ի յաշխարհէ՝ են ցուցա կան.
ըստ հակառակ՝ բնութեանց նոցունց՝ որ վիճա կան:
Թողից ձառել՝ զերկար սոցին՝ զազգմանց ըզ բան.
զոմանց անշարժ՝ առել նոցա՝ կամ շարժա կան:

Այժմ զոր 'ի մարդն առեն նշան՝ և կերպա րան.
Թէ 'ի նոցունց կերպ կենդանեացըն ձևա նան.
Պարձայց 'ի թիւ մոլորակայն 'ի եօթնա կան.
որք տանուտեարք՝ եօթանց դարուց՝ անուանեա ցան.
Այլ և ըստ աւուրցըն շաբաթու՝ համարե ցան.
և ըստ սոցին՝ ժամուց աւուրց՝ բաժանե ցան.
Նախ 'ի ներքին՝ զօտին սկսայց՝ խոնարհա կան.
որ և երկինք՝ լուսնին ասի՝ և կայա րան.
Ապա փայլնոս՝ անուն կոչի՝ ըստ յունա կան.
այլ և դամար՝ նա անուանի՝ ըստ տաճկա կան.
Իսկ մեք լուսին՝ ասեմք սմա՝ ըստ հայկա կան.
վն զի լոյս՝ ունի նա յինքն՝ իւր սեփհա կան.
Եւս աստիճանք՝ զնացից նորա՝ յոյժ նըրբա կան.
զի նա տեղեաւ՝ մերձ է յերկիրս՝ և մօտա կան.
Սուտի յաւուրս՝ երկուս և կէս՝ 'ի յընթաց ման.
զկենդանատեարըն կատարէ՝ և զատանի ձան.
'ի քսան և եօթըն թիւ աւուրցըն կատար ման.
դարձեալ 'ի նոյն՝ գայ վերըստին՝ առեալ ծընընդ եան.
Ի քսան և ինն՝ օր և կիսոյն՝ աւարտա կան.
դարձեալ նորէ՝ զիւր հնութիւն մանկա կան.
Բայց ըզսմանէ՝ ոմանք ասեն՝ որք գիտնա կան.
Թէ ոչ ունի՝ լոյս յինքենէ՝ իւր բընա կան.
Այլ հայելի՝ ընդ դէմ կացեալ՝ արեգա կան.
և 'ի նմանէ՝ ճառագայթէ՝ զլոյսն իւրա կան.
Այլ մեք առեալք՝ ըստ սբ. գրոց՝ ճըշմարտա կան.
Թէ լոյս լուսնին է յինքենէ՝ արարչա կան.

Ըստ այլոց
տա հովէ
և հէ՛ս.

Օ՛ի թէ ճըճի՝ միփոքրագոյն՝ և սողնա  կան.
ունի լուսինկ՝ տապաճորեալ՝ 'ի յեւր ար  տան։
Որով ըզգեբս խոկ լնթենոնուն՝ 'ի ժամ մը  թան.
'ի կարգ գրոյն՝ զնա տանեալ՝ 'ի տողո  կան.
Սպա ոչ է զարմանք աւել՝ զոյս մեղ ըզ  քան.
եթէ ըզլոյս՝ լուսինն ունի բալըզըզնա  կան.
Խակ որ նշան՝ և գիծ 'ընմեյ՝ է դրոշմա  կան.
այն շուք երկրին՝ է և ծովու՝ որք կերպա  նան.
Օ՛ի հայելի՝ է աշխարհին՝ նա ցուցա  կան.
նա և երկրի՝ չափ մեծութն՝ տանն ըզ  քան.
Թէ օրինակ՝ այսպէս խնդրես՝ համանա  կան.
'ի քաղաքաց՝ բազմաց ու սիր՝ տեսեղեբա  կան.
